Ապա մանրակարգ իր հեղինակած եւ նոր լոյս տեսած «Թիֆլիսի քաղաքագիտութեան» հայերէն եւ ռուսերէն տարբերակներով գիրքը: Ս. Կարապետեան գիրքին ռուսերէն տարբերակի հրատարակումը կարեւորեց Թիֆլիսի հայ համայնքի ուսասխօսութեան հանգամանքով: Գիրքը կը ներկայացնէ մինչեւ 1917 թուական Թիֆլիսի 97 քաղաքապետները, որոնց 95ը հայեր եղած են: Այս առնչութեամբ Ս. Կարապետեան անդրադարձաւ հայ քաղաքապետներու եւ ընդհանրապէս հայերու մեծ ներդրումին՝ Թիֆլիսի քաղաքաշինութեան մէջ, նշելով, թէ այս նուիրեալներուն գերեզմանները այժմ աւերած են եւ կանգուն կը մնան միայն երկու ոչ հայ քաղաքապետներուն գերեզմանները: Ան խօսեցաւ նաեւ պատմական Հայաստանի Տայք նահանգի նկատմամբ վրացական յաւակնութեան ու Ջաւախքի ներկայ վրացական մասին: Ս. Կարապետեան շեշտը դրաւ Ջաւախքի հայապահպանման աշխատանքներու կարեւորութեան վրայ: Այս առիթով դասախօսը անդրադարձաւ նաեւ Ջաւախքի հայկական պատմաճարտարապետական կոթողները այլախոսակերպ եւ փճացնելու վրացական փորձերուն եւ այս ուղղութեամբ հայկական մշակութային ինքնապաշտպանութեան վրացական քարոզչական խիստ հակազդեցութեան:

Ս. Կարապետեան շեշտեց, թէ հայկական յուշակոթողներն ու հայերու կատարած շինարարութիւնները կանգուն կը մնան միայն հայերով բնակուած հայրենիքին մէջ: Աւարտելով իր խօսքը, Ս. Կարապետեան հայագիտական հիմնարկի ուսանողները հրաւիրեց օգտուել «հայկական ճարտարապետութեան ուսումնասիրող կազմակերպութեան» գրասենեակի արխիւային հարուստ հաւաքածոյին, յառաջ մղելու համար Հայագիտութեան առնչուող «լուսնուկ» ամսագրի նիւթերը: Դասախօսութեան ետք առիթ տրուեցաւ հարցումներու եւ տեղի ունեցաւ օգտաշատ երկար գրոյց մը: Դասախօսական այս հանդիպումը եզրափակեց հիմնարկի տնօրէն Երուանդ Փամպուկեան, որ կարեւորեց հայու շինարար աշխատանքը անպայմանօրէն հայրենիքին աւերելու եւ անով պահպանագրելու գրաւակները եւ յաղորդութիւն մաղթեց Ս. Կարապետեանի աշխատանքներուն:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐ ԿԸ ԾԱՆՕԹԱՆԱՆ ԼՕՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ



Նախաձեռնութեամբ Լիբանանահայ Օղջնութեան ինչի Շրջանային վարչութեան, Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանատունէն, Լիբանանի աշխատանքի նախարարութենէն, Միջազգային Առողջութեան կազմակերպութենէն ներկայացուցիչներ, ընկերակցութեամբ ԼՕՄԻ պատասխանատուներու, երէկ կէսօրէ առաջ այցելեցին ԼՕՄԻ նորաշէնի (Քէմփ Սանճաք) սերտողութեան վայրը, տեսակցութիւն ունեցան հոն յաճախող քանի մը աշակերտներու հետ, ապա այցելեցին «Արաբի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոն: Այցելութիւններուն նպատակն էր ԼՕՄԻ գործունէութիւնը ծանօթացընել Ֆրանսական դեսպանատան, յատկապէս մանուկներու աշխատանքներուն:

Այցելուներուն կ'ընկերակցէին նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական կոմիտէի ընկերներ, բարերար Մելքոն Պուլղուրճեան եւ Պուրճ Համուտի քաղաքապետը:

«Արաբի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնը:

Շար.՝ էջ 10

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ

ՀԻԼՄԱՐ ՔԱՅԶԸՐ ՇԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒԱԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Հայկական Յեղասպանութեան 88ամեակի յիշատակի ձեռնարկներու ծիրէն ներս, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի «Քոլէճ Հոյ» սրահին մէջ երէկ տեղի ունեցաւ դասախօսութիւն մը Հայկական Յեղասպանութեան մասին: Համալսարանի Հայկական ակումբին կազմակերպած այս ձեռնարկին դասախօսն էր դոկտ. Հիլմար Քայզըր, որ Պէյրութ հրաւիրուած է հայկական ակումբին կողմէ:

Գերմանացի ակադեմիական Քայզըր մասնագէտ է Գերմանիա - Օսմանեան կայսրութիւն յարաբերութիւններու եւ Հայկական Յեղասպանութեան, որոնց մասին ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ աշխատութիւններ: Համապարփակ ձեռնարկ ներկայացնելով Հայկական Յեղասպանութեան հոլովոյթը, Քայզըր կանգ

Շար.՝ էջ 10

Arabic text and logos for a religious or cultural organization.

Չորեքշաբթի, 30 Ապրիլ իր Լիբանանեան օրաթերթերուն առաջին էջերու լուրերը կը կեդրոնանան քանի մը հարցերու վրայ, որոնցմէ ամէնէն կարեւորն են իրանական արտադրութեան աշխատանքային ծրագրի վաւերացման նուիրումը խորհրդարանական երկօրեայ նստաշրջանին քննարկումները, Ապու Մապիւնի գլխաւորած կառավարութեան իշխանութեան պետերուն ոճը: Նոյն հարցին անդրադարձաւ «Քիֆաի Արապի» կը գրէ, որ Հաւալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը շրջան կատարելիք յառաջիկայ այցելութիւնը եւ իրաքեան Ֆալուժա շրջանին մէջ ամերիկեան զօրքերուն կողմէ կազմակերպուած քարոզ:

Այս վերջին հարցին անդրադառնալով՝ «Նահար» օրաթերթը կը գրէ, թէ Քոլին Փաուլը շրջան այցելութեան առաջին հանգրուանը կը սահմանափակուի Սուրիայով եւ Լիբանանով: «Տիար» կը թերթը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին կը կատարէ. «Սուրիայ տարածքին ունին ընդհանուր լուծման յանձնարարութիւն մէջ, եւ Սուրիայ մէջ պիտի ստանան իրենց անհրաժեշտ օգնութիւնը»:

Խորհրդարանական երկօրեայ նստաշրջանի իրադարձութիւններուն «Անուար» օրաթերթը մեծ մանշէթի վրայ կը խորագրէ հետեւեալը. «Հարիւր կը նոյնացնէ երկրին եւ իր կառավարութեան տրուած վստահութիւնը. երեսփոխաններուն արտասանած խօսքերը քննադատելի կառավարութեան կազմուիւնը պարտադրելու իշխանութեան պետերուն ոճը»: Նոյն հարցին անդրադարձաւ «Քիֆաի Արապի» կը գրէ, որ Հարիւր կառավարութեան վստահութեան քննարկումները իրենց չի պահանջեր, այլ՝ երկրին նկատմամբ վստահութիւնը: «Մուսաքապալ» թերթին համաձայն, երեսփոխանական խորհրդակցական հանդիպման ականաւոր անհամար կը մերժեն վստահութեան քննարկումներուն կողմէ, իսկ իրաքի քարիւղի նախարարն ու Պարսի նահանգապետը անձնատուր եղած են դաշնակից ուժերուն: Միւս կողմէ, «Մուսաքապալ» կը յայտնէ, որ իրաքեան նոր կառավարութեան մը կազմութեան առնչութեամբ իրաքի ամերիկացի կառավարիչ ձեռնարկը քախքան իրաքիներու ընդդիմութեան:

Մոցի մէջ գտնուող ամերիկեան ուժերուն կապակցութեամբ «Լիուս» կը նշէ, որ մօտ օրէն այդ ուժերը Սէուտական Արաբիայէն պիտի փոխադրուին Քաթար: Իր կարգին, «Սաֆիր» կը գրէ, որ ամերիկացիները ամառուրէն առաջ պիտի տարածուին իրենց ուժերուն փոխադրութեան գործընթացը:

«Լիուս» օրաթերթը կը հարդրէ Սուրիոյ նախագահ Պաշար Ասադի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլի տեսակցութեան մանրամասնութիւնները: Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի եւ Կիլի հաստատեցին իրաքի ամբողջականութիւնը եւ բոլոր կողմերը ներկայացնող իրաքեան կառավարութեան մը կազմութիւնը:

Այս առնչութեամբ «Նահար» կը գրէ, որ նախագահ Պաշար Ասադ Անգարա պիտի այցելէ այս տարեվերջէն առաջ, իսկ նախարար Շարէի հերքեց այն տարածայնութիւնները, որոնց համաձայն Սուրիա մտադիր է միջամուխ դառնալու իրաքեան հարցերուն եւ կը պահանջէ Սուրիան եւ Լիբանան ներառող խաղաղութեան քարտէս մը: Վերջապէս «Մուսաքապալ» թերթին համաձայն, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամսֆելտ տեսակցութիւն մը ունեցած է Սէուտական Արաբիոյ գահաժառանգ Ապտալա իշխանին հետ եւ հերքած է Դամասկոսի սպառնալիքներ ուղղելու մասին լուրերը:

ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԶԵՌՆԱՐԿ՝ ԷՆ. ՏԻ. ԵՈՒ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Երէկ, Նոյն Տամ Լուէյ-գի (էն. Տի. Եու.) համալսարանի «Կլաս Հոյ» մէջ, հայ ուսանողները կազմակերպած էին Հայկական Յեղասպանութեան նուիրուած ձեռնարկ մը, որուն ընթացքին ներկայացուցան Յեղասպանութեան նուիրուած նկարներ՝ գեղեղուն յատուկ ցուցատախտակներու վրայ, եւ աշխարհաբարձ շակ քաղաքական դէմքերու վկայութիւններն ու խօսքերը Հայկական Յեղասպանութեան մասին:



Հայ ուսանողները նաեւ պատրաստած էին թուղթիկներ, որոնք բաժնուեցան համալսարանի ուսանողներուն եւ դասախօսներուն: Անոնք իւրաքանչիւր այցելողի կը բացատրէին Յեղասպանութեան արհաւիրքներու ու հայ ժողովուրդի կրած տառապանքներու մանրամասնութիւնները: Ժամը 12:00ին, ուսանողները ցուցադրեցին նաեւ «Պի. Պի. Սի.» կայանի կողմէ պատրաստուած «Armenia: The Betrayed» վաւերագրական ժապաւէնը: Ուշագրաւ էր նաեւ այն իրողութիւնը, որ համալսարանի «Social Club»-ը ցուցահանդէսը դիտելէ ետք տեղւոյն վրայ պատրաստեց յատուկ թուղթիկ մը, որուն մէջ կը նշուէր, թէ Հայկական Յեղասպանութիւնը մարդկութեան դէմ գործուած ոճիւր մըն է

եւ 88 տարիներ ետք՝ հայ ժողովուրդի պայքարը կը մնայ էպոս արդար դատի մը դրսեւորումը: Եզրափակելով, կոչին մէջ կը ըսուէր. «Արդարութիւնը չի մեռնիր»: Սոյն ձեռնարկով հայ ուսանողները անգամ մը եւս փաստեցին, թէ իրենք կը մնան յանձնառու, եւ թէ պայքարը պիտի շարունակուի:

Advertisement for Mesrobian magazine, including logos for LCCIEB and British Council, and two bar charts showing circulation data for 2001/2002 and 2002/2003.



Կնոջական

ՀԱՅՐԵՆԻ ԱՐՈՒԲԵՍԱԳԻՏՈՒԻՆԵՐ

Ո՞Վ Է ԱՍՏՂԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ



Աստղիկ Գեորգեան ծնած է 1919ին, աւարտած է իւր Արտիստիկ անուան մանկավարժական հիմնարկը: 1945ին ի վեր կ'աշխատի Մ. Մաշտոցի անուան մատենադարանին մէջ, 1972ին իրեն շնորհուած է արուեստաբանութեան թեկնածուի գիտական աստիճան:

Կեանքին մէկ կարեւոր մասը Ա. Գեորգեան նուիրած է հայկական միջնադարեան մանրանկարչութեան ուսումնասիրութեան եւ զբաղած է ընդօրինակութիւններով: Այս միջոցին լոյս տեսած են անոր չափազանց հետաքրքրական աշխատանքները՝ «Արուեստները եւ կենցաղը հայկական մանրանկարչութեան մասին»: Դիմացկար:

Մանրանկարչութիւնը հանդիսացած է ոչ միայն Աստղիկ Գեորգեանի գիտական հետաքրքրութիւններուն առարկան, այլեւ՝ գեղարուեստական հրապարակը: Խեցիի եւ չոր տերեւներու վրայ իր նուրբ վրձինով ան կը գծէ հեթանոսական նախնիք եւ մանրանկարչութեան տարբեր թեմաներ:



սիրահարն էր մագաղաթին պահ տուած այդ ծաղիկը... Եւ այդ օրէն ես որոշեցի գծել տերեւներու վրայ»:

«Մատենադարանը ինձի համար եղած է երկրորդ համալսարան, իմ մատենագիտական կրթութիւնս հո՞ն ստացած եմ: Ինքզինքս երջանիկ կը համարեմ, քանի որ սեփական ձեռքերովս գիրքեր մատուցած եմ Մանանդեանին, Աճառեանին, Ա. Իսահակեանին, Յ. Անանեանին, որոնց ներկայութիւնը բաւական է հարուստ զգալու համար»:

Աստղիկ Գեորգեանը միջազգային գիտաժողովներու ընթացքին մեր արւեստը ներկայացուցած է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ: Կատարած է շատ կարեւոր եւ պատասխանատու աշխատանք, իր հրատարակչութիւնները հայրենաստեղծ, չափազանց արժէքաւոր գործեր են ներկայ եւ գալիք սերունդներուն համար:

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անձեր, որոնք կը փափաքին «Ազգայի» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէ առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ 5:00:
ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագն կ'ընդունուի միայն ուղիղ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՏԱՍԸ ԹԵԼԱԳԻՐԱՆՔ ՀԱՆԳԻՍՏ ՔՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



Աշխարհի բնակչութեան մէկ կարեւոր տոկոսը կը տառապի անքնութենէ: Անշուշտ որ անքնութեան պատճառները այլազան են եւ անձէ անձ կը տարբերին: Այսուհանդերձ, եթէ անքնութիւնը լուրջ պատճառներ չունի, կարելի է գայն դարմանել կարգ մը պարզ եւ գործնական միջոցառումներով:

Ահա ահա ի տասը թեւադրանք՝ հանգիստ քննալու համար:

1. Սենեակը չիսնոցել աւելորդ կահոյքով, բոյսերով, ծաղիկներով: Վերջինները սենեակին օդը կ'ապականեն թթուածինը ներշնչելու: Օրուան ընթացքին սենեակին պատուհանը բաց պահել՝ անոր օդը փոխելու եւ գիշերը մաքուր օդի մէջ քննալու համար:
2. Անկողինին ներքնակը ոչ շատ կարծր, ոչ ալ շատ կակուղ ըլլայ, որպէսզի կոնակի ցաւ չունենանք:
3. Ընտրել ոչ շատ կարծր եւ բարձր բարձ մը: Պայման է, որ անիկա ըլլայ որակաւոր եւ հանգստաւէտ՝ ուսի եւ վիզի ցաւ չպատճառելու համար:
4. Ննջասենեակին ջերմաստիճանը 17-էն 20ի միջեւ թող ըլլայ, ասիկա սկզբունքով՝ ամէնէն առողջապահական ջերմաստիճանն է հանգիստ քննալու համար:
5. Անօթի փորով չքննալ, ոչ ալ ծանրաբեռնուած ստանեն թթուածինը ներշնչելու: Օրուան ընթացքին մտքով անկողին մտնել: Երկու պարագաներուն ալ քունը կը խանգարուի:
6. Հրաժարիլ ալքոլ պարունակող խմիչքներէն: Յաճախ քննալու նպատակով խմուած ոգելից ըմպելիին հակառակ ազդեցութիւն կը գործէ եւ քունը կը խանգարէ:
7. Եթէ սովորութիւն ունիք մարզանք մը կիրարկելու, քննալէ առաջ մի կիրարկէք, այլ՝ բաւական կանուխ, քանի որ մարզանքը կը բարձրացնէ մարմնին ջերմաստիճանը եւ վերջինս կը խանգարէ քունը:
8. Ոստիկանական դիրքեր չկարգաւ, վայրագ ժայռէններ չդիտել անկողին ուղղուելէ առաջ:
9. Եթէ կարելիութիւնը կայ, քննալէ ժամ մը առաջ ծովափ կամ բնութեան մէջ կէս ժամ քաշել՝ խորունկ շնչելով եւ արտաշնչելով:
10. Սենեակին մէջ զօրաւոր լոյսեր չվառել, բարձր երաժշտութիւն չունկնդրել: Ջանալ մոռնալ օրուան հոգերը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՇԸ

Օրը լաւ սկսելու լաւագոյն միջոցը առտու կանուխ տուչ մը առնելն է: Բայց գիտէ՞ք, որ տուչ ալ կայ տուչ ալ, հապճեպ առնուած տուչը նոյն ազդեցութիւնը չի գործէր, որքան որ ոչ արարողութեան մը հետեւող տուչը: Ահա ահա թանի մը թեւադրանք:

Տուչին տակ անցնելէ առաջ նախ ջուրին ջերմաստիճանը ճշգրտել, որպէսզի այրելու կամ սառելու անախորժ զգացումներէն պաշտպանուինք, եւ մեր տրամադրութիւնը չխանգարուի: Թելադրելի է գաղջ ջուրը, քունի վերջին հետքերը չքացնելու համար, ապա տաքը մկանները թուլացնելու եւ հանգստացնելու համար, վերջապէս պարզ՝ կազդուրուելու համար:

Գործածուող օճառներն ալ իրենց ազդեցութիւնը ունին մեր տրամադրութեան վրայ. այսպէս, բուրբուրեմէտ Թելոններն ու օճառները կը կազդուրեն եւ տրամադրութիւն կը բարձրացնեն: Այսպէս, կիտրոնի, ծովու կամ անտառի բոյրերը թելադրելի են առաւօտեան տուչին, մինչ վարդի, յասմիկի կամ լաւանդինը՝ երեկոյեան տուչին:

Միջակ կարծրութեամբ սպունգ մը ո՛չ մորթը կը զրգռէ եւ ո՛չ ալ կը ցաւցնէ: Կարելի է առողջ



Չափահաս տուչ մը առնելու առանց մարմինը չփելու, իսկ մասնագէտներու կարծիքով, սպունգով մարմինը չփելու պէտք է սկսիլ նախ սրտէն հեռու գտնուող մարմնին մասերէն: Այսպէս, նախ շփել ոտքերն ու սրունքները, ապա թեւերն ու ուսերը, ապա կոնակը, վերջապէս փորն ու կուրծքը:

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետեւյալ հեռախոսային թիւերով: 258526, 260115 եւ 241274:

www.lemagan.com

NEW! ARMENIAN CAUSE (HAY TAD)

L.Y.A. History - Martyrs - Chapters - RAAMIC - Research - Monthly News - A.R.P. History - Armenian History - Armenian Genocide - Chavakh Artsakh - Lisbon 5 - Armenians in Lebanon - links - Icons & photos.

ԳՈՐԾԱԿԱՆ ԹԵԼԱԳՐԱՆԵՆԵՐ

Ի՞ՆՉՊԷՍ ՄԱՔՐԵԼ...

Ա. - ԳՈՐԳԸ
Գորգին փոշին կը մաքրենք երկարական փոշեկուրով, շաքարով առնուած երկու անգամ: Իսկ ամիսը անգամ մը՝ նաեւ հակառակ կողմէն, որպէսզի յատակը կուտակուած փոշին ու աւազը հիմնովին մաքրուին: Անգամ մը, որ գորգին փոշին մաքրուած է, գայն կարելի է օճառել, լուալ, բայց նախընտրաբար գորգի յատակը շամփուով մը մաքրել, որպէսզի գոյները իրարու չանցնին, եւ գորգը պահէ իր փայլքը: Հակաանթելու համար կարելի է երբեմն ջուրին մէջ քիչ մը տեթոլ լուծել եւ շփել գորգը, յատկապէս եթէ տան մէջ սողացող մանուկ կայ: Գորգ մաքրելու ժամանակ բացարձակապէս հրաժարիլ օտը ժաւելէն կամ շատ փրփրող օճառներէն, որոնք կրնան արատներ ձգել եւ վնասել գորգին: Եթէ որոշած ենք գորգը փաթեթել եւ վերցնել, գայն



ցեցէն պաշտպանելու համար կրնանք օգտագործել նաֆթալինը (որ անախորժ հոտուած անպատեհութիւններ ունի), օճառի կտորներ, բայց նաեւ՝ օրաթերթի էջերը: Այո՛, օրաթերթին էջերուն մեկնի հոտը կը հեռացնէ ցեցերը:

Բ. - ԲՐԳԵՂԵՆԸ

Թելադրելի է, որ բրդեղէնները լուացուին ձեռքով եւ մեղմ օճառներով: Շուկան կը ծախուին բրդեղէնի յատուկ օճառի փաթիլներ, որոնք դիւրաւ կը լուծուին ջուրին մէջ եւ չեն վնասեր անոր որակին: Կան նաեւ բրդեղէն լուալու հեղուկ օճառներ: Եթէ



ստիպուեցանք մեր բրդեղէնը լուալ եւ ձեռքի տակ վերոյիշեալ օճառներէն ոչ մէկը ունինք, կրնանք օգտագործել մազի կամ մարմնի շամփու, որ նոյնքան անվնաս է:

Բրդեղէնները շատ լաւ պէտք է ցողուել, որպէսզի օճառի ոչ մէկ հետք մնայ անոնց վրայ: Ցողուելէն ետք գանոնք առանց քաշելու, այլ մեղմօրէն, ափերուն մէջ ճնշելով պէտք է քամել, ապա տարածել ու այդպէս չորցնենք: Երբեք բրդեղէնը լաթակալով չուանէն չկախել, ոչ ալ զօրաւոր արեւին տակ ձգել: Թելադրելի է ցողուելու ընթացքին ջուրին մէջ քիչ մը քացախ եւ կամ փափկացնող հեղուկ լուծել, որպէսզի բուրբուրեմէտ պահէ իր փափկութիւնը եւ խաւերը չտափանան:

ԽՈՐԱԳԻՐ ՓՈՔՐ ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ ԶՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՎ

Բաղադրութիւն 6 անձի համար:-

- 180 կրամ ալիւր
- 125 կրամ շաքար
- 125 կրամ կակուղ կարագ
- 2 հաւկիթ
- 150 կրամ մանր չոր պտուղներ (ֆրուի բոնֆի)
- 1 սուրճի դգալ թթխմոր
- 30 կրամ կարագ
- Պատրաստութիւն:-

Չոր պտուղներուն վրայ ապուրի դգալ մը ալիւր ցանել եւ խառնել:

Թել գործիքով զարնել կակուղ կարագն ու շաքարը (3-4 վայրկեան), ապա մէկիկ - մէկիկ աւելցնել հաւկիթները՝ տեւաբար զարնելով:

Ալիւրն ու թթխմորը խառնել եւ երկու անգամով հաւկիթներուն վրայ աւելցնել, տեւաբար խառնելով: Աւելցնել չոր պտուղները:


Խմորը բաժնել նախապէս իւղուած կաղապարներուն մէջ եւ 30-35 վայրկեան 180 ջերմաստիճանով փուռին մէջ եփել, մինչեւ որ ուռին եւ ոսկեգոյն դառնան: Փուռէն հանելէ ետք ձգել որ պաղին եւ ապա հրամցնել:

Պատրաստեց՝ ՇՈՒԾԻԿ ՄԱԻՍԱՍՈՒՆԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաճույքն ունինք տեղեկացնելու, թե Համահայկական Երրորդ խաղերը տեղի պիտի ունենան Երեւանի մէջ, 16էն 24 Օգոստոս 2003ին:

Վերոյիշեալ միջոցառումին, լիբանանահայ գաղութի արժանավայել մասնակցութիւնը պահովելու առաջադրանքով, կապուեցաւ Միացեալ Մարմին մը անդամակցութեամբ լիբանանահայ մարզական միութիւններու ներկայացուցիչներուն:

Մարզական միացեալ պատուիրակութիւնը, որ պիտի մասնակցի Պէյրութ քաղաքի անունով, պիտի բաղկանայ աւելի քան 60 անդամներէ, որոնք, ֆուտբոլի, պատեքստի, փինկ փունկի ու ճատրակի մարզերէն ներս պիտի բերեն իրենց խմբային ու անհատական մասնակցութիւնը, որուն կապակերպման համար կարիքը ունինք լիբանանահայութեան ամբողջական ներկայութիւնը:

Մարզիկներուն մասնակցութեան համար նախատեսուած ծախսերը հոգալու նպատակաւ, ծրագրած ենք շարք մը միջոցառումներ, որոնց կարգին մարզական մրցումներ:

Վստահ ենք, որ լիբանանահայութիւնը պիտի բերէ իր անվերապահ աջակցութիւնը, որպէսզի մեր մարզիկ - մարզիկուհիները ներկայացնեն չինք Համահայկական Երրորդ խաղերուն:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻԱՅԵԱՄ ՄԱՐՄԻՆ

ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ. Մ. Ը. Մ. Ի ԿՐՏԱԵՐՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՏԻՏՂՈՍԻ ԱՐԺԱՆԱՅԱՆ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փունկի տարիքային մրցաշարքին, երէկ Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ արժանացաւ իր երկրորդ տիտղոսին, երբ 86-87ի ծնունդ դասակարգին մէջ Մայիք Թաուելի աւարտակաւին 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Մոհամէտ Պահմէտը մարտի մրցումէ մը ետք: Օր մը առաջ, Աւօ Մունջոյդեան չափեցաւ 92-93ի ծնունդ դասակարգի մրցաշարքը, աւարտականին պարտութեան մատնելով Հրակ Պետոյեանը (2-0):

- Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:
- 86-87ի ԾՆՈՒՆԴ - Հրայր Պօղոսեան (Անթիլիսա) - Մոհամէտ Պահմէտ 0-2
- Սերուժ Զամիչեան (Անթիլիսա) - Նապիլ Սըլէյման 2-1
- Սերուժ Զամիչեան (Անթիլիսա) - Ժալալ Թաուելի (Պէյրութ) 0-2
- Մայիք Թաուելի (Պէյրութ) - Ժաք Անթուն 2-0
- Մայիք Թաուելի (Պէյրութ) - Խալիլ Սըլէյման 2-0
- Մայիք Թաուելի (Պէյրութ) - Քրիսթիան Թահմէ 2-0
- Մայիք Թաուելի (Պէյրութ) - Անթուն Զադրուր 2-0
- Մայիք Թաուելի (Պէյրութ) - Մոհամէտ Պահմէտ 2-1
- Արամ Մանուկեան (Անթիլիսա) - Ֆիլիպ Ֆաթթա 2-0
- Արամ Մանուկեան (Անթիլիսա) - Ժոզէֆ Սըլէյման 2-0
- Արամ Մանուկեան (Անթիլիսա) - Մահակ Փալեան (Թրիփոլի) 0-2
- Մահակ Փալեան (Թրիփոլի) - Մոհամէտ Ռիֆաի 2-0
- Մահակ Փալեան (Թրիփոլի) - Ռամզի Հայէք 2-0
- Մահակ Փալեան (Թրիփոլի) - Փօլ Նսամմէ 0-2 (կիսաւարտական)
- Հայկ Խաչերեան (Թրիփոլի) - Մարք Մաալուֆ 1-2

● **ԼԻԲԱՆԱՆԻ** փինկ փունկի տղոց խմբային ախոյեանութեան մրցաշարքին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մէջ, Հ. Մ. Ը. Մ. Պէյրութի յայտնի Հինգաբլի կը կատարէ երկու մրցում: Առաջինին (ժամը 5:30ին) կը ճակատի Պաուելիի դէմ, իսկ երկրորդին (ժամը 7:00ին)՝ Ատապ Ուալ Ռիսասայի դէմ:

ՀԵՃԵԼԱՐՇԱՒ

ԿԱԼՏԷՆՕ ԿԱՆԱԿԱՅՈՒԵՑԱԻ

Սպանացի Հեծելանորդ Իկոր Կոնզալէս Կալտէանօ երէկ վեց ամիսով կախակալուեցաւ եւ անոր արգելուեցաւ այդ ժամանակամիջոցին Ֆրանսայի մէջ որեւէ շրջավազքի իր մասնակցութիւնը բերել, խթանիչ ղեկըրու գործածութեամբ ամբաստանուելով:

Այս մէկը կը նշանակէ, որ ան իր մասնակցութիւնը պիտի չբերէ Ֆրանսայի շրջավազքին, որ կը նկատուի աշխարհի կարեւորագոյնը:

Հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնը թէեւ ցարդ չէ կախակալած Կալտէանին, սակայն կ'ըսէ, թէ անպայման պատիժ մը պիտի սահմանէ:

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Երեքշաբթի, 29 Ապրիլին, Դամասկոսի «Շերաթոն» պանդոկին մէջ տեղի ունեցաւ միացեալ ախոյեանութեան մը գծով փորձողական շամաձայնութիւն մը Լիբանանի եւ Սուրիայի պատեքստի լի պատասխանատուներուն միջեւ: Համաձայնագիրին ստորագրութեան հանդիսութեան ներկայ էր Լիբանանի երիտասարդու թեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպեհ Յովանեան:

ԵՐՐՕ-2004Ի ՏՈՄԱԿՆԵՐԵՆ ՄԱՍ ՍԸ ԱՐԴԵՆ ՇՈՒԿԱՅ ԻԶԱԾ Է

Երր-2004ի հիւրընկալ Փորթուգալ արդէն իսկ շուկայ իջեցուցած է մրցաշարքին տոմսակները:

2004 Յունիս 12էն Յունիս 4 տեղի ունենալիք 31 մրցումներուն 1,2 միլիոն տոմսակներէն ցարդ 450 հազար տոմսակ հրապարակ վրայ է ցարդ: Մնացեալ տոմսակները շուկայ պիտի իջնեն յառաջիկայ Նոյեմբեր 30էն ետք, երբ յատկանան 16 խումբերը:

Փորթուգալի ֆուտբոլի ֆետերասիոնին նախագահը՝ Ժիլպէրթօ Մատալի մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց, թէ յոյսով է, որ տոմսակները շուկայ պիտի սպառին: Տոմսակներուն գինը կը սկսի 35 եւրոյէն (38 ամերիկեան տոլար) եւ կը հասնի մինչեւ 270 եւրո (297 ամերիկեան տոլար):

Մրցաշարքին տոմսակները Անթունիօ Լարանտօ ըսաւ, թէ տոմսակներուն գինը ճշրուած է հիմնուելով Երր-2000ի վրայ:

Ըստ Ե. Է. Բ. Ա. ի, Հոլանտայի եւ Պելճիքայի մէջ տեղի ունեցած Երր-2000ի մրցաշարքին տոմսակներուն 93 առ հարիւր սպառեցաւ:

ԵՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՅ ՎՈՒՂ ՎՉՐ

Էն. Պի. Էյ. Ի փէյթֆի երէկուան մրցումներուն, Մինչափոլիսի մէջ, Լոս Անճելըս Լէյքըրզ կէտերու մեծ տարբերութեամբ յաղթանակ մը արձանագրեց՝ 120-90, Մինեսոթա Վուլվզի դէմ:

Յաղթական կազմին մարզիկներէն Բոպէ Պրայընթ նշանակեց 32 կէտ, իսկ անոր խմբակիցը՝ Շաքիլ Օնելի 27 կէտ եւ 11 ռիպուտ: Վոլվզի մարզիկ Քեիլի Կառնէթ նշանակեց 25 կէտ եւ 16 ռիպուտ: Վոլվզ, որ իր վեցերորդ մրցումը պիտի կատարէ Լոս Անճելըսի մէջ, վերջին վեց տարիներուն յաջորդաբար վեց անգամ դուրս կը մնայ փէյթֆի Ա. Հանգրուանի մրցումներէն:

Դարձեալ Արեւմտեան շրջանէն, Սան Անթոնիօ Սփըրզ յոյն արդիւնքով կը յառաջանայ իր մրցակիցին՝ Ֆէօնիքս Սանդիվայ: Երէկուան մրցումին Սփըրզ իր յաղթանակը արձանագրեց Սան Անթոնիօյի մէջ՝ 94-82 արդիւնքով:

Սփըրզի մարզիկներէն Մայիք Ռոզ նշանակեց 27 կէտ եւ 13 ռիպուտ, իսկ անոր խմբակից թիմ Տանքըն 23 կէտ եւ 17 ռիպուտ: Վեցերորդ մրցումը տեղի պիտի ունենայ Ֆէօնիքսի մէջ, Արեւելեան գօտիէն, ԿԸ ՆՈՒՐԻՆ

● **Գեորգ ճերիտեանի** մահուան քառասունընց ամեակը, Տեր եւ տիկին Ժան Խաչատրեան 50 տոլար՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբին:

Ըստ Լարանտայի, 1,2 միլիոն տոմսակներուն 38 առ հարիւր ուղղակիօրէն հրապարակ պիտի իջնէ, մինչ 39 առ հարիւր պիտի տրամադրուի մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող պայմանի խումբերու ֆետերասիոններուն:

Նշենք, թէ ուր քաղաքներու մէջ տեղի ունենալիք մրցաշարքին համար նկատի առնուած տասը դաշտերուն նորոգութեան (Երեքին) եւ շինութեան (Եօթին) ծախսերը կը գնահատուին շուրջ 640 միլիոն եւրո:

Նիւ ձըրզի նէթց 89-82 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրերը՝ Միլուոքի Պաքսը, այսպիսով 3-2 արդիւնքով յառաջանալով անոր վրայ: Նէթցի մարզիկ Ճէյսոն Բիտնշանակեց 19 կէտ, 6 ռիպուտ եւ 5 ֆիլթ: Վեցերորդ մրցումը տեղի պիտի ունենայ Միլուոքիի մէջ:

Իր կարգին, Ինտիանա Փէյսըրզ 3-2 արդիւնքով յառաջացաւ Պոսթըն Սելթիքսի վրայ, իր յաղթանակը արձանագրելով ինտիանա Պորթլանդի մէջ, յետո՛ւ Երկու Միլուոքիի մէջ, իսկ Լոս Անճելըսի մէջ, Սելթիքսի մարզիկներէն Անթուն Բլոքըր թէեւ նշանակեց 21 կէտ, սակայն յաղթանակ մը արձանագրելու համար:

● **ՖԻԼԱՏԵԼՖԻԱ ՍԻԲՍԸՐԶ** (Արեւելեան շրջան) եւ Սաքրամենթօ Բիլիկ (Արեւմտեան շրջան) յաղթանակներ արձանագրեցին իր յաղթանակները: Սիբսըրզ իր յաղթանակը արձանագրեց Սիբսըրզի մէջ, իսկ Սաքրամենթօ Բիլիկ իր յաղթանակը արձանագրեց Սաքրամենթօյի մէջ: Զորրորդ մրցումին, որ տեղի ունեցաւ Սոլթ Լէյք Սիթիի մէջ, Բիլիկ 99-82 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց: Բիլիկի մարզիկներէն Քրիս Ուեպլըր նշանակեց 26 կէտ եւ 11 ռիպուտ:

ՖիլաՏելֆիա Սիբսըրզ (Արեւելեան շրջան) եւ Սաքրամենթօ Բիլիկ (Արեւմտեան շրջան) յաղթանակներ արձանագրեցին իր յաղթանակները: Սիբսըրզ իր յաղթանակը արձանագրեց Սիբսըրզի մէջ, իսկ Սաքրամենթօ Բիլիկ իր յաղթանակը արձանագրեց Սաքրամենթօյի մէջ: Զորրորդ մրցումին, որ տեղի ունեցաւ Սոլթ Լէյք Սիթիի մէջ, Բիլիկ 99-82 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց: Բիլիկի մարզիկներէն Քրիս Ուեպլըր նշանակեց 26 կէտ եւ 11 ռիպուտ:

ՖԻՏԱԻ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ՊՐԱԶԻԼ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

ՖիՏԱԻ հրապարակած ազգային խումբերուն Ապրիլ ամսուան ընդհանուր դասաւորման մէջ, Պրազիլ շարունակեց մնալ առաջին, իր ետին ձգելով Սպանիան (2րդ) եւ Ֆրանսան (3րդ): Գերմանիա բարձրացաւ 4րդ դիրքը, իսկ Անգլիան՝ 7րդ (նախապէս՝ 9րդ):

Բոսնիա Ռիբա, որ բարձրացաւ 18րդ դիրքը (նախապէս՝ 21րդ), իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով առաջին ջրանիւն մէջ գտաւ ինքզինքը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը կարեւոր ուսուցում մը արձանագրեց, երբ 113րդ դիրքէն բարձրացաւ 105րդ դիրքը:

Մինչ Հայաստան ուսուցում արձանագրեց, անդին Լիբանան եւ Սուրիա նահանջեցին: Սուրիա նահանջեց 92րդ դիրքը (նախապէս՝ 91րդ), իսկ Լիբանան՝ 116րդ (նախապէս՝ 110րդ):

Նշենք, թէ այս ամսուան ընթացքին մեծագոյն ուսուցում արձանագրող խումբը Հանգիսացաւ Բուլգար, որ 73րդ դիրքէն բարձրացաւ 55րդ դիրքը:

ԱՅՍՕՐ՝ Հ.Մ.Ը.Մ. - ՇԱՊԱՊ ՍԱՅԷԼ ԲԱՐԵԿԱՍՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Այսօր՝ Հինգշաբթի, կէսօրէ ետք ժամը 4:30ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը բարեկամական մրցում մը պիտի կատարէ Ա. դասակարգի կազմերէն՝ Շապապ Սահէյի դէմ:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի ներկայ ըլլալ այս մրցումին եւ քաջաբերել մարզիկները, որոնք կը պատրաստուին յառաջիկայ Երեքշաբթի, 6 Մայիսին Ահմետի դէմ տեղի ունենալիք Լիբանանի ֆուտբոլի բաժանի մրցաշարքին քառորդ աւարտականի երթի մրցումին:

Այս մրցումը սկզբունքով տեղի պիտի ունենար երէկ, սակայն նկատի ունենալով, որ Լիբանանի ֆուտբոլի Ողիմպիական խումբը (անիկա երէկ մեկնեցաւ Ինտոնեզիա) ապահովեց Աթէնքի մէջ տեղի ունենալիք 2004ի Ողիմպիականին գտուելու Բ. հանգրուանի իր տոմարը, մրցումը յետաձգուեցաւ:

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը առաջարկեց Ահմետի ֆուտբոլի ֆետերասիոնին, որ այս մրցումը յետաձգէ ՍԱՐՍ հիւանդութեան պատճառով, սակայն առաջարկը մերժուեցաւ: Երթի մրցումը տեղի պիտի ունենայ Շապապ, 3 Մայիսին, Ինտոնեզիոյ մէջ:

ԸՍԼՉԻՈՅԻ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՂԱՆԱԿԻ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ ԸՇԴՈՒԵՑԱՆ ԱՐԴԵՆ

Իտալիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը երէկ յայտնեց, թէ Քալչիոյի 2003 - 2004 եղանակը պիտի սկսի յառաջիկայ Օգոստոս 31ին եւ պիտի աւարտի 16 Մայիս 2004ին:

2003 - 2004 եղանակի Իտալիոյ բաժանի մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումները պիտի սկսին յառաջիկայ Օգոստոս 17ին սկսեալ, իսկ զեր բաժանի մրցումը՝ ախոյեանին եւ բաժակակիրին միջեւ, տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստոս 24ին:

Նշենք, որ Իտալիոյ ֆուտբոլի այս տարուան ախոյեանութեան ապրանշանը երկու շաբաթով ուշացած էր, որովհետեւ վէճ ծագած էր պատկերասփիւռի կայաններուն հետ:

ԼԵԿԱՍ

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան բոլճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍԻ պատեքստի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:

- Մեծ տղաք - Սոֆիա Յակոբեան - Տամլեան - Թաթիկեան 52-35
- Մեծ աղջիկներ - Յառաջ - Տամլեան - Թաթիկեան 42-22
- Միջակ աղջիկներ - ձեմարան - Ս. Խանամիրեան 31-17
- Միջակ տղաք - ձեմարան - Ս. Խանամիրեան 56-36
- Մեծ աղջիկներ - ձեմարան - Սոֆիա Յակոբեան 44-21

ՍՏՐՈՒՆ ԶԱՐԹԱՅԻՆ ԺԱՄ

- Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:
- Մեծ տղաք - Սոֆիա Յակոբեան - Կ. Բ. Վ. 1:00
- Մեծ տղաք - Բաղաք Հայ Աւետ. քոլէճ - Տամլեան - Թաթիկեան 2:00
- Միջակ աղջիկներ - Մեսրոպեան - Ս. Հոփսիմեանց 3:00
- Մեծ աղջիկներ - Ս. Հոփսիմեանց - Յառաջ 4:00

ԿԻՐԱԿԻ. 4 ՄԱՅԻՍ

- Մեծ աղջիկներ - Մեսրոպեան - Թորոսեան 1:30
- Միջակ աղջիկներ - Յառաջ - Յովակիմեան 2:45
- Միջակ աղջիկներ - Կ. Բ. Վ. - Ս. Խանամիրեան 4:00
- Մեծ տղաք - Մեսրոպեան - Եղիշէ Մանուկեան 5:00
- Միջակ տղաք - Եղիշէ Մանուկեան - Ս. Խանամիրեան 6:00

ԵՐԵՎԱՆԻ. 6 ՄԱՅԻՍ

- Մեծ տղաք - Ս. Հոփսիմեանց - Յովակիմեան 4:00
- Միջակ տղաք - Մեսրոպեան - Ս. Հոփսիմեանց 5:00
- Մեծ աղջիկներ - Թորոսեան - Սոֆիա Յակոբեան 6:00
- Մեծ տղաք - Մեսրոպեան - ձեմարան 7:00



FUEL CARDի

Դպրոցական Ֆոնտը 2002-2003 տարեշրջանի

Կրթանպաստ տրամադրուած է մեծ թիւով հայ աշակերտներու Գործացեցէք FUEL CARDը եւ ձեր ներդրումը բերած կ'ըլլաք տնտեսական օգտաշատ ծրագիրներու իրականացման:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Համուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Հանքաշ, Կալիքի իթքիատ
- ▶ ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՄ - «Ալմազ»
- ▶ MALLAH - Անթիլիսա, կաթողիկոսարանի դիմաց

- ▶ MALLAH - Հաքթե Ղուուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Լառի, «Փէօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատք

